

# «ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ՆԱԽԱԳԻԾ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՕՐԵՆՔԸ

### «ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Տրանսպորտի մասին» 1998 թվականի փետրվարի 9-ի ՀՕ-201 Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասից հետո լրացնել նոր 1.1 մասով՝ հետևյալ խմբագրությամբ.

«1.1. Կառավարությունը ավտոմոբիլային, երկաթուղային, ջրային և օդային տրանսպորտի ոլորտներում ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների զարգացման նպատակով կարող է ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից նոր տրանսպորտային միջոցներ ձեռք բերելու համար, ինչպես նաև ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների ծավալները ավելացնելու համար հաստատել ֆինանսական աջակցության ծրագրեր:»

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: